ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Կենսաթոշակային ապահովության ոլորտի լիազոր և իրավասու մարմինների ներկայացուցիչների խորհրդակցությանը մասնակցելու նպատակով Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն) գործուղման արդյունքների վերաբերյալ

1. Անունը, ազգանունը

Սմբատ Սաիյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն), 2019 թվականի մայիսի 21-23-ը

4. Հրավիրող կողմը՝

Եվրասիական տնտեսական հանձնաժողով

5. Գործուղման նպատակը՝

Մասնակցություն կենսաթոշակային ապահովության ոլորտի լիազոր և իրավասու մարմինների ներկայացուցիչների խորհրդակցությանը (մայիսի 21-22) և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների աշխատողների սոցիալական պաշտպանության, կենսաթոշակային իրավունքների, բժշկական օգնության և մասնագիտական գործունեության հարցերով խորհրդատվական կոմիտեի 5-րդ նիստին (մայիսի 23):

6. Քննարկված թեմաները

1) «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների աշխատավորների կենսաթոշակային ապահովության մասին» համաձայնագրի կիրառման կարգի նախագիծ (այսուհետ՝ Կարգի նախագիծ),

2) Խորհրդատվական կոմիտեի 5-րդ նիստի օրակարգային հարցեր (օրակարգը կցվում է):

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

2019 թվականի մայիսի 21-22-ին տեղի ունեցած՝ Կենսաթոշակային ապահովության ոլորտի լիազոր և իրավասու մարմինների ներկայացուցիչների խորհրդակցությունը վարում էր Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքային միգրացիայի և սոցիալական պաշտպանության վարչության պետ Պ. Ու. Սույումբաևան:

Խորհրդակցության ընթացքում մեկ անգամ ևս անդրադարձ կատարվեց Կարգի նախագծի այն դրույթներին, որոնց կապակցությամբ առկա էին տարաձայնություններ:

Քննարկումների արդյունքում փոխհամաձայնություն չկայացավ հետևյալ 2 հարցերի կապակցությամբ.

1) ՌԴ ներկայացուցիչների կարծիքով Կարգի նախագծով նախատեսված ձևաթղթերի (ֆորմուլյարների) հիման վրա պետք է փոխանակվի ամբողջ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկատվությունը, որն անհրաժեշտ է նաև Համաձայնագրի 12-րդ հոդվածի հիման վրա կենսաթոշակի չափը հաշվարկելու համար, իսկ մյուս անդամ-պետությունների ներկայացուցիչների կարծիքով՝ բացառապես այն աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկատվությունը, որն անհրաժեշտ է Համաձայնագրի 7-րդ հոդվածի հիման վրա կենսաթոշակի իրավունքը որոշելու համար (Կարգի նախագծի 9-րդ կետ),

2) Համաձայն Կարգի նախագծի՝ այլ պետության կողմից նշանակված կենսաթոշակը վճարելու հետ կապված ծախսերը կատարում է բնակության վայրի պետության կողմից, իսկ մեր կարծիքով այդ ծախսերը պետք է կատարվեն բնակության վայրի պետության օրենսդրությամբ սահմանված կարգով (այսինքն, օրինակ, եթե ՀՀ-ում սահմանվի, որ կենսաթոշակը վճարելու ծախսերը կատարում է կենսաթոշակառուն, ապա այդ դրույթը տարածվելու է նաև այն դեպքերի վրա, երբ ՀՀ-ում վճարվում է նաև այլ պետության կողմից նշանակված կենսաթոշակը):

Միաժամանակ, ի կատարումն 2019 թ. ապրիլի 29-ին կայացած ԵՏՀ խորհրդի նիստում ձեռք բերված պայմանավորվածության, մեր կողմից առաջարկվեց Կարգի նախագծում ներառել դրույթ առ այն, որ անձը կարող է ձեռք բերել (գնել) ՌԴ օրենսդրության համաձայն կենսաթոշակի իրավունք տվող՝ պակասող միավորները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կարգի նախագիծը պարունակում է հիմնականում ընթացակարգային դրույթներ, որոշվեց այդ դրույթը ներպետական համաձայնեցման շրջանակներում ներառել Համաձայնագրի նախագծում:

Քննարկվեցին նաև Կարգի կիրարկումն ապահովող ձևաթղթերը (ֆորմուլյարները):

2019 թվականի մայիսի 23-ին տեղի ունեցած՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների աշխատողների սոցիալական պաշտպանության, կենսաթոշակային իրավունքների, բժշկական օգնության և մասնագիտական

գործունեության հարցերով խորհրդատվական կոմիտեի 5-րդ նիստը վարում էր Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի անդամ (նախարար) Տ. Մ. Ժակսիլիկովը:

Քննարկվեցին օրակարգի բոլոր հարցերը:

Օրակարգի 3-րդ հարցի շրջանակներում անդրադարձ կատարվեց նաև «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների աշխատավորների կենսաթոշակային ապահովության մասին» համաձայնագրի նախագծի կապակցությամբ 2019 թ. ապրիլի 29-ին կայացած ԵՏՀ խորհրդի նիստում ձեռք բերված պայմանավորվածություններին:

8. Քննարկման արդյունքում որոշվեց՝

1) Հավանություն տալ Կարգի նախագծին և շարունակել աշխատանքները այն լրամշակելու ուղղությամբ,

2) Ի կատարումն 2019 թ. ապրիլի 29-ին կայացած ԵՏՀ խորհրդի նիստում ձեռք բերված պայմանավորվածությունների՝ ներպետական համաձայնեցման շրջանակներում «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների աշխատավորների կենսաթոշակային ապահովության մասին» համաձայնագրի նախագծում ներառել դրույթ, որի համաձայն անձը կարող է գնել չբավարարող բալերը,

3) Շարունակել աշխատանքները ձևաթղթերի (ֆորմուլյարների) լրամշակման ուղղությամբ

4) Կենսաթոշակային ապահովության ոլորտի լիազոր և իրավասու մարմինների ներկայացուցիչների հաջորդ խորհրդակցությունը նախատեսել ամռանը, հաշվի առնելով ժամկետների սղությունը

5) Խորհրդատվական կոմիտեի հաջորդ՝ 6-րդ նիստը նախատեսել Բելառուսում:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Պաշտոնական առաջարկությունները (դիրքորոշումները) Հանձնաժողով կներկայացվեն գրավոր՝ կենսաթոշակային ապահովության ոլորտի լիազոր և իրավասու մարմինների ներկայացուցիչների խորհրդակցության արձանագրության և Խորհրդատվական կոմիտեի 5-րդ նիստի արձանագրության համաձայն՝ դրանցում նշված ժամկետներում:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

29.05.2019